ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ ԺԱՄԸ 17:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
-
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Ֆելիքս Պողոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2020-2021 թվականներին իրականացված և 2021 թվականին ավարտված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկում իրականացնելու մասին

/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հանձնարարական՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին և զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին՝

ա/ Կազմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2020-2021 թվականներին իրականացված, սակայն 2021 թվականին ավարտված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկում իրականացնելու այցելությունների ժամանակացույց և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

բ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծված մշտադիտարկման աշխատանքային խմբի կողմից յուրաքանչյուր 10 սուբվենցիոն ծրագրի մասով իրականացված մշտադիտարկման արդյունքները ներկայացնել Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ մշտադիտարկման ընթացքում հայտնաբերված խնդիրներն ու թերությունները երաշխիքային ժամկետում շտկելու նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

գ/2021 թվականին հաստատված և 2022 թվականին շարունակվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր ամսվա 10-ին և 25-ին համապատասխան ձևաչափով ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ժամկետ՝մշտադիտարկման ժամանակացույցով սահմանված ժամկետներ:

Հարց 2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում միասնական երթուղային ցանցի ներդրման մասին

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հանձնարարական՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան գործընկերների և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների հետ համատեղ քննարկել և մշակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանց և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

Ժամկետ՝ 5 օր:

Հարց 3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2021 թվականի և 2022 թվականի (3 ամիսների կտրվածքով) բյուջեների եկամուտների հավաքագրման մասին

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հանձնարարական՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող Անտոնինա Վասիլյանին և տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Գոռ Հովհաննիսյանին՝

ա/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների հետ փոխգործակցված, ամենօրյա ուշադրության և վերահսկողության կենտրոնում պահել 2022 թվականին համայնքների բյուջեների եկամուտների հավաքագրման գործընթացը՝ ապահովելով հավաքագրումների բարձր ցուցանիշներ /հավաքագրումները չթողնելով տարեվերջին/ և հավաքագրման ընթացիկ արդյունքների վերաբերյալ պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

բ/ Համապատասխան ուսումնասիրմամբ կատարել վերլուծություն և արդյունքները, որպես օրակարգային հարց, ներկայացնել 2022 թվականի մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի նիստի քննարկմանը:

Հարց 4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում իրավական ակտերի նախագծերը քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հանձնարարական՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝
արդյունավետ կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ստացված բոլոր իրավական ակտերի նախագծերի քննարկումը և հիմնավորված առաջարկություններ ներկայացնելու նպատակով, ըստ անհրաժեշտության, շահագրգիռ կողմերի /մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և մարզի համայնքապետարանների ներկայացուցիչների/ մասնակցությամբ, ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի մոտ դիտարկել բոլոր կարծիքներն ու առաջարկությունները, այնուհետև դրանք ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

Հարց 5. 2022 թվականի մայիսի 9-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում նշվող Հաղթանակի և խաղաղության տոնի օրվան նվիրված միջոցառումների ժամանակացույցի մշակման վերաբերյալ

/ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հանձնարարական՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանին և զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Անդրանիկ Լալայանին՝

Մինչև 2022 թվականի մայիսի 5-ը ներառյալ համապատասխան ընթացակարգով համատեղ քննարկել և կազմել հանդիսավոր միջոցառումների կազմակերպման և անցկացման ժամանակացույց և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաստատմանը:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 4/27/2022 17:47:04 GMT+4

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արձ.՝
Դ.Դավթյան